ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2020թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26012016-01-0117 վկայական) 942.1քմ մակերեսով գույքը (մանկապարտեզ՝ 926.7քմ և կաթսայատուն՝15.4քմ մակերեսով տարածքները) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 3262.25քմ մակերեսով հողամասը, անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը («Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող 942.1քմ մակերեսով գույքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 3262.25քմ մակերեսով հողամասը հինգ տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը («Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ) անհատույց օգտագործման իրավունքով:

Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող անշարժ գույքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26012016-01-0117 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Աջափնյակ համայնքի ավագանու 23.11.2004թ. հ.259.9 որոշման համաձայն՝ քննարկվող տարածքը համայնքի ռիսկի ենթակա երեխաների սոցիալական և հոգեբանական վերականգնման աշխատանքների կազմակերպման նպատակով անհատույց օգտագործման իրավունքով, տասը տարի ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին, սակայն իրավունքը պետական գրանցում չի ստացել:

Երևան քաղաքի ավագանու 24.06.2016թ. հ.552-Ա որոշման համաձայն՝ Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով, երեք տարի ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072016-01-0246 վկայական):

Կազմակերպությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան երեխաներին մատուցում է տարաբնույթ սոցիալական ծառայություններ՝ այդ թվում սոցիալ-հոգեբանական օգնություն, ուսումնադաստիարակչական ծառայություններ, մասնագիտական կողմնորոշում, ժամանցի կազմակերպում, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված այլ միջոցառումներ, աջակցում է նրանց ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող գույքը «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու հարցի վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը», «Լույս» և «Բարգավաճ Հայաստան» խմբակցություններն առարկություններ չեն ներկայացրել և այն գնահատել են դրական:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.178-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի՝ առաջարկվում է քննարկվող գույքը, ևս հինգ տարի ժամկետով, տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը («Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ